ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«—» ———— 2024թ. **N____ Ն**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄԸ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 18-Ի N 1-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝

Երևանի ավագանին որոշում է.

1. Երևանի ավագանու 2009 թվականի հունիսի 18-ի «Երևան քաղաքի կանոնակարգը ընդունելու մասին» N 1-Ն որոշման հավելվածը լրացնել հետևյալ կետով.

«83.1. Երևանի բյուջեի կատարման վերահսկողությունն արդյունավետ իրականացնելու նպատակով՝ ընթացիկ տարվա ոչ ուշ, քան վերջին նիստում Ավագանին որոշում է կայացնում բյուջեի կատարման տարեկան հաշվետվության վերաբերյալ «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով աուդիտ անցկացնելու մասին, որի համար վճարումը կատարվում է Երևանի բյուջեից:

Աուդիտ անցկացնելու նպատակով աուդիտորական կազմակերպություն ընտրելու մրցույթին կարող են մասնակցել այն անկախ աուդիտորական կազմակերպությունները, որոնք՝

ա. ունեն առնվազն 5 տարվա աշխատանքային փորձ աուդիտի ոլորտում,

բ. ունեն առնվազն 7 աշխատակից, ովքեր ունեն առնվազն 5 տարվա աուդիտորական աշխատանքային փորձ, և որոնցից առնվազն 2-ը ունեն միջազգային որևէ որակավորում:»

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Ազգային առաջընթաց» խմբակցության անդամ Հայկ Գրիգորյան

ՏԵՂԵԿԱՆՔ – ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 18-Ի N 1-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Գործող կանոնակարգը և ՀՀ օրենսդրությունն առհասարակ որևէ կերպ չի կանոնակարգում աուդիտորական ընկերությանը ներկայացվող պահանջները, որի պարագայում ցանկացած տեսակի կազմակերպություն, այդ թվում՝ աուդիտից մեկ ամիս առաջ հիմնադրված և առանց որևէ աշխատանքային փորձառության կարող է ըստ էության մասնակցել և հաղթել՝ առաջարկելով ամենացածր արժեքը:

Նման պայմաններում տվյալ կարգավորման բացակայությունը հանգեցնում է աուդիտի գործընթացի իմաստազրկման, քանի որ կարող է բերել և ըստ էության բերում է նրան, որ աուդիտի գործընթացը դարձել է ձևական՝ ապահովելու համար միայն օրենսդրական պահանջի բավարարմանը: Անտեսվում են բուն աուդիտի էությունն ու նշանակությունը, չկա հստակ հաշվետվողականության մեխանիզմ ավագանու համար բյուջեի կատարողականները հաստատելուց առաջ ունենալու հստակ պատկերացումներ նախորդ տարվա ընթացքում կատարված բյուջետային գործողությունների իմաստով:

Նախագիծն ուղղված է բյուջեի միջոցների ծախսումն առավել թափանցիկ, պատասխանատու և հաշվետու դարձնելուն:

«Ազգային առաջընթաց» խմբակցության անդամ Հայկ Գրիգորյան